ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
2022, № 1, 83-93 *Ժուռնալիստիկա*
https://doi.org/10.46991/BYSU:B/2022.13.1.083

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՆԱԻՐԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Պատերազմների, զինված բախումների ընթացքում կողմերի պատերազմական հանցագործությունները, մարդկության դեմ հանցագործությունները և այլն պրոֆեսիոնալ ու նպատակային լուսաբանելու համար անհրաժեշտ են ոչ միայն լրագրողական մասնագիտական գիտելիքներ և հմտություններ, այլև նեղ մասնագիտական որոշակի պատրատվածություն, այդ թվում՝ հակամարտության պատմական հիմքերի, քաղաքական փուլային զարգացումների, միջազգային կազմակերպությունների գործունեության, իրավասությունների շրջանակների մասին տեղեկացվածության բարձր մակարդակ, միջազգային իրավունքի տարբեր ճյուղերի իմացություն, միջազգային դատարաններում լրագրողների աշխատելու հնարավորությունների, հավատարմագրման կարգի, պատերազմական հանցագործությունների քննության ժամանակ միջազգային դատարանում աշխատելառճի, ձևերի մասին գիտելիքներ և այլն:

Դրանք կարող են օգնել համադրելու փաստերը, հետաքննություններ սկսելու, բացահայտելու խնդիրները, իրազեկելու հանրությանը այն կարևորի մասին, ինչը տեսանելի է բոլորին, և որ ամենակարևորն է, կարող են ուղենիշ լինել հակամարտության, դրա շուրջ ծավալվող աշխարհաքաղաքական գործընթացների վերաբերյալ նոր հայացքների ու նոր ընկալումների ձևավորման հարցում: Հոդվածում հետազոտության թեման արծարծվում է Ղարաբաղյան հակամարտության համատեքստում, մասնավորապես՝ 44-օրյա պատերազմի:

Բանալի բառեր - *Ղարաբաղյան հակամարտություն, պատերազմական հանցագործություններ, մարդու իրավունքներ, միջազգային քրեական իրավունք, զինված հակամարտությունների լուսաբանում, ռազմական լրագրություն*

Պատերազմի դաշտում հանցագործությունները, դրանց բնույթը, դրսևորման ձևերը հաճախ ավելի լավ կարող են ներկայացնել հակամարտության բուն էությունը: Մարտի դաշտում հանցագործությունները լուսաբանելը, դրանց մասին բարձրաձայնելը, մեղավորներին պատասխանատվության ենթարկելը ևս պետք է միտված լինեն հակամարտությունը հանգուցալուծելուն, և, եթե հնարավոր է, նոր կետից հարաբերություններ կառուցելուն: Ղարաբաղյան հակամարտության դեպքում, մեր դիտարկմամբ, սրան կարելի է հասնել միայն իրավաքաղաքական բավարար հիմքերի ապահովմամբ՝ հակամարտության ըն-

թացքում էթնիկ անհանդուրժողականությամբ հրահրված ամենատարբեր հանցագործություններին իրավական գնահատական տալով:

Տարիներ շարունակ ադրբեջանական իշխանությունների կողմից խրախուսվող և տարածվող հայատյացության քարոզը ի վերջո հանգեցրել է այդ ժողովրդի շրջանում հայի կերպարի դեմոնիզացման, էլ ավելի է սրել էթնիկ անհանդուրժողականության մթնոլորտը՝ հանգեցնելով այն զարհուրելի իրականությանը, որի ամենատարբեր դրսևորումները ի հայտ եկան 2020 թվականի 44-օրյա պատերազմի օրերին, անգամ հրադադարի համաձայնագրի հաստատումից հետո շարունակվում են:

Կարո՞ղ է արդյոք լրագրողը որոշել՝ իր աչքի առջև տեղի ունեցողը հանցագործությո՞ւն է, թե՞ ոչ: Սրա համար անհրաժեշտ են հատուկ գիտելիքներ: Ռուանդայի ցեղասպանությունից հետո, օրինակ, զինված հակամարտություններ լուսաբանող լրագրողների համար լայնածավալ դասընթացներ կազմակերպվեցին աշխարհի տարբեր երկրներում, ինչը, մասնագետների վկայությամբ, շոշափելի դրական արդյունքների հանգեցրեց[1]: Այս առումով կարևոր է, որ հակամարտությունը լուսաբանող մասնագետները հատուկ պատրաստվածություն անցնեն նաև պատերազմական հանցագործությունների լուսաբանման առանձնահատկությունների տեսանկյունից, կարողանան հետաքննությամբ հասնել անգամ քրեական գործերի հարուցման, պատասխանատու միջազգային կազմակերպությունների ներգրավմամբ նպաստել արդարության վերականգմանը: Կարծում ենք՝ Հայաստանում և Արցախում ևս լրատվական գործունեությամբ զբաղվող անձանց, լրատվամիջոցների ներկայացուցիչների համար նմանատիպ վերապատրաստումները, անհրաժեշտ գիտելիքներով վերազինելը խիստ կարևոր և արդիական խնդիրներ են: Հաշվի առնելով նախորդ երեք տասնամյակների իրադարձությունները և դրանց համապատկերում հայկական մեդիադաշտի պասիվությունը՝ հոդվածի շրջանակներում առաջ ենք քաշել մի շարք արդիական հարցեր, որոնք ընդգծում են պատերազմի ընթացքում տեղի ունեցած հանցագործությունների մասին բարձրաձայնելու կարևորությունը և կարող են օգտակար կողմնորոշիչներ լինել հակամարտության լուսաբանմամբ զբաղվող մասնագետների համար:

Ինչ պետք է իմանան լրագրողները պատերազմի ընթացքում տեղի ունեցած հանցագործությունները լուսաբանելիս:

Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ միջազգային դատարանում Հայաստանն Ադրբեջանի դեմ առաջին անգամ հայցով հանդես եկավ 2020 թվականի հոկտեմբերի 14-15-ը: ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը Հաագայի Խաղաղության պալատում անցկացրեց հանրային լսումներ՝ «Ռասայական խտրականութ-

[1] Տե՛ս **Ross Howard,** Conflict Sensitive Reporting. State of the Art. A Cource for Journalists and Journalism Educators, https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000186986

յան բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի կիրառման համար ժամանակավոր միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ: Միջազգային դատարանում Հայաստանը ներկայացնող իրավաբանական թիմի անդամ, իրավաբանական գիտությունների թեկնածու, փաստաբան Լևոն Գևորգյանի համոզմամբ[2]՝ միջազգային իրավունքի առանձնահատկություններից ելնելով, Ադրբեջանին պատասխանատվության կանչելու ամենահարմար գործիքը, ըստ էության, «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան էր, որը երկու պետություններն էլ վավերացրել են: Այն վեճերի կարգավորման ընթացակարգ ունի միջազգային դատարանի միջոցով, որը իրականում հնարավորություն է տալիս Հայաստանին կենտրոնանալու ոչ միայն վերջին պատերազմի ժամանակ արձանագրված հանցագործությունների և խախտումների վրա, այլև փաստացի քննարկման առարկա դարձնելու Ադրբեջանի կողմից տասնամյակների ընթացքում վարած հայատյաց քաղաքականությունը՝ իր ամենատարբեր դրսևորումներով: Ինչո՞ւ հակամարտության նախորդ փուլերում արձանագրված հանցագործություններն ու խախտումները մինչև այժմ իրավական գնահատական չեն ստացել…Հայաստանը կոնվենցիան վավերացրել է 1993 թվականին, Ադրբեջանը՝ 1996-ին: Այսինքն՝ շարունակական բնույթ չկրող ցանկացած իրավախախտման վերաբերյալ քննարկում կարող էինք սկսել 1996 թվականից: Թերևս եղել է մտավախություն, որ ցանկացած դատական գործընթաց կամ միջազգային որևէ այլ ատյանում Ղարաբաղյան հակամարտության և հայ-ադրբեջանական տարաձայնությունների շուրջ հարցերի քննարկումը կարող է անխուսափելիորեն խաթարել Մինսկի խմբի գործընթացը: Նկատենք, որ կարևոր է ոչ միայն միջազգային դատարանի որոշումը, այլև գործընթացն ինքնին, քանի որ այն նպաստելու է, որ միջազգային ճիշտ ընկալումներ ձևավորվեն: Տեղեկատվական հարթակն այստեղ, կարծում ենք, մեծ անելիք ունի, սակայն մեդիադաշտի արձագանքը, կարծես, այնքան էլ ոգևորիչ չէր: Մասնագետների գնահատմամբ՝ սա բարդ գործընթաց է, որը մի քանի խնդիրներ է շոշափում՝ տեղեկատվական, քաղաքական, իրավական: Տեղեկատվական հարթությունում հայկական լրատվամիջոցները պասիվ էին: Լևոն Գևորգյանի համոզմամբ՝ սա առօրյա իրադարձություն չէ, ընդ որում՝ ոչ միայն հայաստանյան, այլև համաշխարհային մասշտաբներով: Սա փորձ է հայ-ադրբեջանական հակամարտությունը ռազմաքաղաքական հարթակից տեղափոխելու իրավական դաշտ: Նկատենք նաև, որ միջազգային դատարանում լրագրողներ չկային, այդ թվում՝ հայկական պատվիրակության կազմում: Փաստաբանական թիմի անդամը նշում է, որ լրագրողների ներկայությունը կարող էր

[2] Տե՛ս «Լևոն Գևորգյան. Ժամանակն է՝ դարաբաղյան հակամարտությունը դիտարկել իրավական դաշտի տիրույթներում», հարցազրույցը վարեց՝ Ն. Համբարձումյանը, https://www.aravot.am/2021/11/01/1226112/?fbclid=IwAR1pREZ3Y14BSRnpEcCzmQW7JO_x6jz0ZFGXi6WwEK2hlhQ8YZzXSRIYUok

շատ արդյունավետ լինել: Սա, ի վերջո, բարձր մակարդակի տեղեկացվածություն կարող էր երաշխավորել, կարող էին լինել լրագրողական վերլուծություններ, հետաքննություններ, որոնք շատ կարևոր կլինեին լսարանի, հանրային լայն շրջանակներում ընկալումների ձևավորման տեսանկյունից, առաջ կբերեին նոր, թարմ կարծիքներ, մոտեցումներ, և ոչ թե խնդիրը կլուսաբանվեր որպես հերթական թեմա՝ մոռացվելով մինչև մյուս դատական լսումներ:

Հայ-ադրբեջանական հակամարտության լուծման գործընթացը համակողմանի ջանքեր է պահանջում: Տարիներ շարունակ ամենատարբեր հարթակներում առանձին-առանձին պայքար է մղվել՝ տեղեկատվական, դիվանագիտական, ռազմական, բայց ժամանակն է, որ հակամարտության կարգավորման իրավական կողմին ևս ուշադրություն դարձնենք[3]: Մեր ուսումնասիրությունները հուշում են, որ պատերազմների, զինված բախումների ընթացքում կողմերի պատերազմական հանցագործությունները, մարդկության դեմ հանցագործությունները և այլն պրոֆեսիոնալ ու նպատակային լուսաբանելու համար անհրաժեշտ են ոչ միայն լրագրողական մասնագիտական գիտելիքներ և հմտություններ, այլև նեղ մասնագիտական որոշակի պատրաստվածություն, այդ թվում՝ հակամարտության պատմական հիմքերի, քաղաքական փուլային զարգացումների, միջազգային կազմակերպությունների գործունեության, իրավասությունների շրջանակների մասին համակողմանի տեղեկացվածություն, միջազգային իրավունքի տարբեր ճյուղերի իմացություն, կազմակերպությունների հետ հաղորդակցվելու անհրաժեշտ հմտությունների և գործիքների տիրապետում, միջազգային դատարաններում լրագրողների աշխատելու հնարավորությունների, հավատարմագրման կարգի, պատերազմական հանցագործությունների քննության ժամանակ միջազգային դատարանում աշխատելառճի, ձևերի մասին գիտելիքներ և այլն:

Ֆրիդրիխ-Ալեքսանդր Էռլանգեն - Նյուրնբերգի համալսարանի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, հայ-գերմանական իրավաբանների միության նախագահ Գուրգեն Պետրոսյանը[4], անդրադառնալով Ղարաբաղյան հակամարտության համատեքստում Ադրբեջանի իրագործած պատերազմական հանցագործություններին միջազգային իրավական գնահատականներ տալու հնարավոր ուղիներին, առանձնահատուկ նշում է, որ Ադրբեջանը դեռևս 1980-ականների վերջերից բազմիցս զինված բախումներ է հրահրել ինչպես ՀՀ սահմանամերձ բնակավայրերում, այնպես էլ Ադրբեջանական Հանրապետության հայաբնակ համայնքներում, որոնք ուղեկցվել են հայերի բռնաճնշումներով, լայնածավալ տեղահանություններով, սակայն կարևոր է տարբերակել՝ ինչ հանցագործություններ են սրանք: Այս գիտելիքները կարևոր են

[3] Տե՛ս նույն տեղը:

[4] Տե՛ս «Կկանգնի՞ արդյոք Ադրբեջանը միջազգային տրիբունալի առաջ», հարցազրույցը վարեց Ն. Համբարձումյանը, https://www.aravot.am/2021/09/03/1213235/?fbclid=IwAR2uHnnnHLFlGE0CiilgyAVlicE-vgqRBFPkFCBH84n0us67W8KbXB599YE

նաև լրագրողների համար, որոնք մասնագիտացած են հակամարտության լուսաբանման ասպարեզում: Մասնագետի դիտարկմամբ՝ Սումգայիթում, Բաքվում և Ադրբեջանի հայաշատ այլ բնակավայրերում տեղի ունեցած ոճրագործությունները ոչ այնքան պատերազմական հանցագործություններ են, որքան մարդկության դեմ հանցագործություններ, քանի որ դժվար է հստակեցնել՝ կա՞ր արդյոք այդ ժամանակ զինված ընդհարում, թե՞ ոչ: Մարդկանց արտաքսելը կամ խոշտանգելը, սպանելը…կարո՞ղ են դիտարկվել մարդկության դեմ հանցագործությունների շրջանակում: Բանն այն է, որ «մարդկության դեմ հանցագործությունների մասին» եզրույթը միայն երկուհազարականներից հետո է ձևակերպվել Հռոմի ստատուտի շրջանակներում: Հայաստանը ստորագրել է այս ստատուտը, սակայն չի վավերացրել: Բացի այդ, նախորդ հազարամյակի վերջերին տեղի ունեցած իրադարձությունների մասով կիրառելի չէ, քանի որ ստատուտը հետադարձ ուժ չունի: Հակամարտության նախորդ փուլում տեղի ունեցած պատերազմական հանցագործությունների մասին միջազգային իրավունքի շրջանակներում որևէ քրեական դատավարության, որևէ իրավական վարույթի մասին Պետրոսյանն ինքը տեղյակ չէ: «Գիտական ասպարեզում խոսվել է այս մասին, բարձրաձայնվել են խնդիրները, բայց փաստացի երբեք որևէ գործընթաց չի սկսվել, լավ կլիներ, եթե գիտական հետազոտությունները կիրառական նշանակություն ունենային նաև այս ոլորտում»[5],- նշում է իրավագետը:

Մեր դիտարկմամբ՝ կարևոր է, որ գիտական այդ հետազոտությունները հայտնվեն նաև լրագրողական համայնքի ուշադրության կենտրոնում ինչպես ուսումնասիրվելու, այնպես էլ հանրությանը հանրամատչելի կերպով մատուցելու, իրազեկելու տեսանկյունից: Ե՛վ 1994-ի, և՛ 2020-ի հրադադարի համաձայնագրերից հետո պարբերական և լայնածավալ հարձակումներ թե՛ ՀՀ պետական սահմանի երկայնքով, թե՛ Արցախի նկատմամբ մշտապես եղել են: Դիտորդական առաքելություն իրականացնող մարմինների մշտադիտարկումներից, արձանագրություններից, քննադատություններից զատ՝ արդյո՞ք Ադրբեջանի այս գործելաոճը երբևէ իրավական գնահատական ստացել է: 2014-ի հունվար, հուլիս, օգոստոս ամիսներին, 2016-ի ապրիլին, 2020-ի հուլիսին, հետո արդեն՝ սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը պարբերաբար եղել են զինված բախումներ, մարտական գործողություններ, սակայն միջազգային քրեական իրավունքի շրջանակներում որևէ վարույթ չի սկսվել այս դեպքերի առնչությամբ:

Պետք է հաշվի առնել, որ ատյանները քիչ են, իսկ հակամարտություններ բռնկվում են աշխարհի տարբեր հատվածներում ու պարբերաբար: Նման իրավասություն ունի Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որը, սակայն, քննում է ոչ թե քրեական, այլ պետական պատասխանատվության տեսանկյունից, և, մասնավորապես, եթե պետութ-

[5] Նույն տեղում:

յունը խախտել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան։ ՄԻԵԴ-ը ոչ թե պատերազմական հանցագործություններն է քննում, այլ դրանց հետևանքով մարդու իրավունքների, սեփականության իրավունքի, կյանքի իրավունքի…այս կամ այն կերպ ոտնահարման դեպքերը։ Այս առումով ուշագրավ է ընդգծել, որ հայկական մեդիահարթակում, օրինակ, Արցախի հայաթափված բնակավայրերից ներքին տեղահանված անձանց կամ փախստականների խնդիրները հայկական մեդիադաշտում լուսաբանվում են զուտ սոցիալ-կենցաղային խնդիրների տեսանկյունից և ոչ իրավունքի, կամ առհասարակ անուշադրության են մատնված։ Այնինչ հակամարտության հետևանքով ծագած հումանիտար ճգնաժամի կարևոր բաղադրիչներից է սա, որ պետք է լիներ լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում։ Պատերազմական հանցագործություններ քննելու առումով իրավասություններ ունի Հաագայի միջազգային քրեական դատարանը։ Սակայն նկատենք, որ Հայաստանը այս ատյանի անդամ պետություն չէ, ինչպես և Ադրբեջանը։ Որպեսզի որևէ գործ այս ատյանում վարույթ ընդունվի, կողմերը պետք է անդամակցած պետություններ լինեն։ Մյուս ատյանը Արդարադատության միջազգային դատարանն է, որը ոչ թե անձնական պատասխանատվությունն է քննում, այլ պետական պատասխանատվությունը։ Հայաստանում չկար այն գիտակցումը, որ այս կոնֆլիկտը ո՛չ այսօր է լուծվելու և ո՛չ էլ վաղը, և որ միջազգային իրավական մարմինների հետ հարաբերություններ կառուցելը պարզապես անհրաժեշտություն է. դա գուցե անվտանգային երաշխիք լիներ հայկական պետությունների համար։ Այս հարցը ևս հայկական մեդիադաշտում բավարար չափով չի քննարկվել։ Մյուս կողմից՝ մասնագետները շեշտում են, որ եթե մենք վավերացնենք Հռոմի ստատուտը, ոչ միայն Ադրբեջանի իրագործած պատերազմական հանցագործություններն են քննվելու, այլև մեր մասով էլ կարող են հարցեր առաջանալ։ Սակայն պետք է հաշվի առնել, որ նույնիսկ դատարանի միակողմանի իրավասության ճանաչման շրջանակներում դատարանը չի ունենա ուղղակի իրավասություն ադրբեջանական պատերազմական հանցագործությունների նկատմամբ։ Մասնավորապես, Ադրբեջանը կարող է առաջ քաշել բազմիցս շահարկվող տեղահանված ադրբեջանցիների հարցը և այլն։ Տարիներ շարունակ այս հակամարտության իրավական գնահատականներում բազմաթիվ բացեր են եղել, բազմաթիվ ինչուներ, որոնք կարող էին և պետք է հիմնավոր պատասխաններ ունենային. մենք այս ուղղությամբ շատ ենք թերացել։

44-օրյա պատերազմի ընթացքում Գանձակի թեման Ադրբեջանը շահարկեց բավական մեծ ծավալներով, իսկ Հայաստանում և Արցախում տեղի ունեցող մարդկության դեմ հանցագործությունների, պատերազմական հանցագործությունների վերաբերյալ համարժեք աղմուկ չբարձրացավ. սա հետագայում նույնպես խնդիրներ կարող է առաջ բերել։ Տեղեկատվական դաշտում նրանք կարողացան համոզել

միջազգային հանրությանը, որ հայկական կողմը խոցել է ոչ թե առաջնագծին մոտ բնակավայրերում միտումնավոր նախապես տեղակայված զրահատեխնիկան, այլ հենց խաղաղ բնակավայրերն է թիրախավորել[6]: Փաստացի լավ մշակված տեղեկույթը միջազգային տեղեկատվական դաշտում կարող է դիրքորոշումներ ձևավորել և ազդել միջազգային հանրության մտածողության ու պատկերացումների վրա: Այս առումով լրագրողների հետաքրքրվածությունը կարող է դրական արդյունքներ տալ, սակայն անհրաժեշտ է ծայրագույն զգուշավորություն ցուցաբերել՝ ոչ մի դեպքում չխախտելով մասնագիտական էթիկայի գրված ու չգրված նորմերը, այլապես կարելի է մեծ վնաս հասցնել գործին: Անհասկանալի է, օրինակ, հայ լրագրողների օպերատիվ արձագանքը գերությունից վերադարձած անձանց անձնական պատմություններին: Չէ՞ որ այդ տեղեկությունները հասանելի են նաև այն պետությանը, որտեղ դեռևս գերեվարված անձինք կան: Բացի այդ, այնպես չէ, որ բոլորը մինչև վերջ կարող են անկեղծանալ, և հաճախ այդ զրույցները կարող են նաև որոշ միֆեր ստեղծել, օրինակ, որ Ադրբեջանում իսկապես լավ են վարվում ռազմագերիների հետ, և կարիք չկա իրավական պատասխանատվության կանչել այդ պետությանը: Լրագրողները միանշանակ պետք է բարձրաձայնեն պատերազմական հանցագործությունների մասին՝ չվնասելով այլ ոլորտների մասնագետների աշխատանքը և այլ կարևոր գործընթացներ:

Ինչ կարևորություն կարող են ունենալ միջազգային և տեղական լրատվամիջոցների անդրադարձները (ադրբեջանական զինուժի հանցագործությունների օրինակով):

Ամերիկացի լրագրող և Պուլիցերյան մրցանակի դափնեկիր Ռոյ Գուտմանը գրում է, որ մարդու իրավունքների խախտումները, ռազմական հանցագործություններն ու անպատժելիությունը լրագրողները հետևողականորեն լուսաբանում են այն պարզ պատճառով, որ հանցագործությունները նորությունների մշտական նյութ են: Լրատվամիջոցների ավանդական դերը՝ պայքարել բացասական երևույթների դեմ, ստիպում է լրագրողներին խոսել իրավունքի ոտնահարման դեպքերի մասին, հատկապես երբ դրա մեղավորը պետությունն է կամ հաստատությունը: Սակայն միջազգային կամ ներքին հակամարտությունները հազվադեպ են լուսաբանվում զանգվածային լրատվամիջոցներում պատերազմի օրենքների խախտման տեսանկյունից: Միջազգային մարդասիրական իրավունքը ենթադրությունների, սկզբունքների, հիմնավորումների և վերապահումների ցանց է, որը բոլորովին անհասկանալի է անտեղյակների համար: Գուտմանը վստահություն է հայտնում, որ մարդու իրավունքների և Ժնևյան հռչակագրերի իմացությունը կօգնի բարելավելու տեղեկատվական հաղորդումների որակը[7]:

---

[6] Տե՛ս նույն տեղը:

[7] Տե՛ս “Spotlight on violations of international humanitarian law. The role of the media”.

2020-ին Ղարաբաղում լրագրողները ևս անմասն չմնացին պատերազմի հարվածներից, այդ թվում՝ միջազգային լրատվամիջոցների ներկայացուցիչները: Ոմանք նույնիսկ ծանր վիրավորումներ ստացան պատերազմի դաշտում[8]: Լրագրող Յուրի Կոտյոնոկը, որը Ադրբեջանի հերթական ռմբակոծության հետևանքով ծանր վիրավորվել էր Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցում նկարահանումներից մեկի ժամանակ, Արցախում կատարվողը իր ռեպորտաժում հստակ անվանեց ցեղասպանություն[9]: Պատերազմում Ադրբեջանի կողմից կռվող վարձկանների ներգրավվածության մասին լուրերը դեռ առաջին օրերին հայտնվեցին միջազգային առաջատար լրատվամիջոցների էջերում. «Գարդիանը»[10], «Ռոյթերսը»[11], «Բի-Բի-Սի»[12]-ն, «Երուսաղեմ փոստը»[13], «Շպիգելը»[14] և հեղինակավոր այլ պարբերականներ պարբերաբար ահազանգում էին այս մասին. հրապարակումներում մասնավորապես նշվում էր, որ հայերի դեմ կռվելու համար Թուրքիայից Ադրբեջան վարձկաններ են տեղափոխվում: «Գարդիանը» հանդես եկավ պատերազմական հանցագործությունների, մասնավորապես՝ սոցիալական մեդիայի հարթակներում պատերազմի օրերին տարածված գլխատման, խոշտանգման և զանազան վայրագություններ պատկերող տեսագրությունների հրապարակմամբ, որտեղ նաև առանձնահատուկ անդրադարձավ պատերազմի ընթացքում գերեվարված անձանց նկատմամբ խոշտանգումների դեպքերին[15]: «Գարդիանը» անդրադարձավ Մադաթաշեն գյուղից վաթսունիննամյա Գենադի Պետրոսյանի և Ազոխ գյուղից Սումգայիթից փախստական ութսուներկուամյա Յուրի Ասրյանի գլխատման դեպքերին[16]:

«Բի Բի Սի»-ն և «Բելլինգքաթը» ևս հանդես եկան պատերազմա-

31-12-1998, Article, International Review of the Red Cross, No. 325, by Roy W. Gutman. https://www.icrc.org/en/doc/resources/documents/article/other/57jpjf.htm

[8] Տե՛ս "Attacks on Press and Journalists", https://azeriwarcrimes.org/targeting-press/

[9] Տե՛ս "Minutes before the second airstrike on Shushi Cathedral by Azerbaijan (Rus, Eng)": https://www.youtube.com/watch?v=PTMcm3KtQrk

[10] Տե՛ս "Bethan Mckernan. Syrian rebel fighters prepare to deploy to Azerbaijan in sign of Turkey's ambition": https://www.theguardian.com/world/2020/sep/28/syrian-rebel-fighters-prepare-to-deploy-to-azerbaijan-in-sign-of-turkeys-ambition

[11] Տե՛ս "Turkey deploying Syrian fighters to help ally Azerbaijan, two fighters say". https://www.reuters.com/article/us-armenia-azerbaijan-turkey-syria-idUSKBN26J25A

[12] Տե՛ս «Я не знал, что придется воевать. Би-би-си нашла наемника из Сирии в Карабахе»: https://www.bbc.com/russian/features-54348623?xtor

[13] Տե՛ս "Evidence mounts that Turkey recruited Syrians to fight Armenia". https://www.jpost.com/middle-east/evidence-mounts-that-turkey-recruited-syrians-to-fight-armenia-644078?

[14] Տե՛ս «Syrische Söldner im Bergkarabach-Konflikt», https://www.spiegel.de/ausland/bergkarabach-tuerkische-regierung-schickt-gezielt-syrische-soeldner-a-432ebced-23b0-4fdf-a566-ae830f96905d?fbclid=IwAR3lvzQuBEq1p3Ywf62NRfa8LwZ-d4jbWdwQMj-F1_qVhX8xRWGsBKx-L80

[15] Տե՛ս "Human rights groups detail "war crimes" in Nagorno-Karabakh: Amnesty and Human Rights Watch release reports showing evidence of beheadings, torture and other abuse", https://www.theguardian.com/world/2020/dec/10/human-rights-groups-detail-war-crimes-in-nagorno-karabakh

[16] Տե՛ս "Andrew Roth, Two men beheaded in videos from Nagorno-Karabakh war identified, Exclusive: Ethnic Armenian men refused to leave their villages before Azerbaijani forces arrived, locals say", https://www.theguardian.com/world/2020/dec/15/two-men-beheaded-in-videos-from-nagorno-karabakh-war-identified

կան հանցագործություններ պարունակող տեսանյութերի տարածման քննադատությամբ, մասնավորապես ներկայացվեց լրագրողական հետաքննություն ադրբեջանցի զինծառայողների կողմից խաղաղ բնակիչներ Բենիկ Հակոբյանի և Յուրի Ադամյանի գերեվարման, այնուհետև գնդակահարության հանգամանքների բացահայտման վերաբերյալ[17]: «Բի Բի Սի»-ն հետագայում տարակուսանք հայտնեց, որ, չնայած անհերքելի փաստերին, ադրբեջանական կողմը տեսանյութը կեղծիք համարեց: «Բի Բի Սի»-ն իր հրապարակման մեջ հանգամանալից անդրադարձել էր նաև գերիների նկատմամբ վերաբերմունքին, խաղաղ բնակավայրերի ուղղությամբ արգելված զինատեսակների կիրառությանը, մասնավորապես՝ կասետային ռումբերին, այս առնչությամբ լրատվական ծառայության լրագրողը առանձին հարցազրույցի ժամանակ անգամ հարց էր ուղղել Ադրբեջանի նախագահին, որը ակնհայտ փաստը կեղծիք էր համարել:

«Դոյչե Վելլե»-ն պատերազմական հանցագործությունների թեմային անդրադարձավ այս առիթով ՄԱԿ-ի հնչեցրած մտահոգությունների շրջանակներում միայն: «Եվրասիանեթը» ևս բազմակողմանիորեն անդրադարձել էր պատերազմական հանցագործություններին[18], ինչպես նաև ադրբեջանական կողմի արձագանքներին: «ՌԲԿ»-ն իր համացանցային տիրույթում անդրադարձել էր թեմային զուտ «Ամնեսթի ինթերնեյշնլ»-ի զեկույցի շրջանակներում[19]: «Ալ Ջազիրա»-ն ևս անդրադարձել էր պատերազմի դաշտում տեղի ունեցող հանցագործություններին[20]: «Վաշինգթոն փոսթ»-ն իր հրապարակման մեջ անդրադարձել է գլխատումների առանձին դեպքերի, բացի այդ, լրագրողը դիմել է իրավապաշտպանների՝ նրանց գնահատականները ևս լսելու համար: Լրատվամիջոցն անդրադարձել է հակամարտության նախապատմությանը, գերեվարված անձանց թեմային՝ ընդգծելով, որ հրադադարի համաձայնագրի հրապարակումից հետո անգամ հակամարտության գոտում որոշ քաղաքացիական անձինք են անհետացել[21]: Օտարազգի անհատ լրագրողներ ևս անդրադարձել են պատերազմական հանցագործություններին: Միջազգային լրագրող Չակ Հոլթոնը տեսաձայնագ-

---

[17] Տե՛ս «Кто убил Беника и Юрия? Би-би-си разбирает видео с расстрелом пленников в Карабахе: Григор Атанесян, Бенджамин Стрик». 23 октября 2020: https://www.bbc.com/russian/features-55351255

[18] Տե՛ս "Evidence of widespread atrocities emerges following Karabakh war: The Azerbaijani government has promised to prosecute any war crimes, but many are skeptical of its sincerity. Ulkar Natiqqizi, Joshua Kucera". Dec 9, 2020, https://eurasianet.org/evidence-of-widespread-atrocities-emerges-following-karabakh-war

[19] Տե՛ս «Правозащитники заявили о военных преступлениях Армении и Азербайджана», https://www.rbc.ru/politics/10/12/2020/5fd1e9c19a7947ad206274d9

[20] Տե՛ս "Baku to probe alleged war crimes by both Azerbaijan, Armenia: During clashes over Nagorno-Karabakh, Azeri and Armenian soldiers were accused of executions, defiling bodies", https://www.aljazeera.com/news/2020/11/25/baku-to-probe-alleged-war-crimes-by-both-azerbaijan-armenia

[21] Տե՛ս "Videos from Nagorno-Karabakh conflict prompt accusations of war crimes: by Liz Cookman". December 25, 2020: https://www.washingtonpost.com/world/armenia-nagornokarabakh-war-crimes/2020/12/24/f8b28900-4165-11eb-b58b-1623f6267960_story.html

րել էր Հադրութի շրջանի Տող գյուղի բնակչուհու վկայությունն այն մասին, թե ինչպես իր աչքի առաջ ադրբեջանցի զինվորականները գլխատել էին իր հարևանին[22]: Սաշա Կոտն իր թելեգրամյան ալիքում տեսագրություն էր տեղադրել, որտեղ հստակ արձանագրված են Արցախի անտառային հատվածներում Ադրբեջանի՝ ֆոսֆորային զինատեսակների կիրառումը վկայող կադրերը: Ի դեպ, միջազգային փաստաթղթերում արգելված զինատեսակների կիրառումը ևս հանցագործություն է:

Հայկական մեդիադաշտում պատերազմական հանցագործությունների մասին լայնորեն սկսեցին խոսել հիմնականում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և մի խումբ փաստաբանների հրավիրած մամուլի ասուլիսից հետո, և հրապարակումների հիմնական մասը լրատվական բնույթի էին: Վերլուծական նյութեր գրեթե չկային: Թեմայի շուրջ որոշ հրապարակումներ սկսեցին ի հայտ գալ նաև Հաագայում ՄԱԿ-ի արդարադատության պալատում Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի հայցի շրջանակներում լսումների համատեքստում, սակայն դրանք ևս տեղեկատվական բնույթի հրապարակումներ էին, չկային խորքային լուսաբանումներ: Ցավոք, այս իրադարձությունը ևս հետպատերազմական Հայաստանում իշխող քաղաքական ներքին տրամադրությունների շրջանակում դիտարկվեց: Կարելի է ասել, որ առանձին դեպքերում նույնիսկ քաղաքականացվեց, օրինակ, «Ազատությունը» թեմային անդրադարձավ ականապատ դաշտերի և ականազերծման նպատակով Հայաստանից պահանջվող ականապատ տարածքների քարտեզների առնչությամբ՝ ամբողջությամբ շրջանցելով բուն թեման, մինչդեռ ռեպորտաժի ծանրակշիռ մասը հատկացված էր Ադրբեջանի զեկույցին և դրա վերլուծությանը[23]: Թեմային հիմնականում անդրադարձան ընդդիմադիր ուժերի կողմից հովանավորվող կամ ղեկավարվող լրատվամիջոցները, իսկ Հանրային հեռուստատեսության լուսաբանումը գրեթե չբարձրացավ լուրի մակարդակից:

Հակամարտության համատեքստում հայրենազրկված արցախցիների խնդիրներին և իրավական պաշտպանությանն անդրադառնում են «Մեդիամաքս» լրատվական գործակալությունն իր «Հադրութի ձայնը» շարքում և «Հետք» լրատվական գործակալությունը, որն առանձին-առանձին ներկայացնում է 44-օրյա պատերազմի ընթացքում ադրբեջանցիների կողմից դաժանորեն սպանված քաղաքացիական անձանց պատմությունները[24]:

Կարծում ենք՝ խիստ կարևոր է, որ հետպատերազմական փուլում մեդիադաշտն առավել ակտիվ և ճկուն աշխատանք ծավալի. 44-օրյա

---

[22] Տե՛ս "The Hot Zone With Chuck Holton", https://www.youtube.com/watch?v=TlQvy8zSmNc

[23] Տե՛ս «Ադրբեջանը Հաագայում Երևանից պահանջեց հանձնել ականապատման քարտեզները», https://www.youtube.com/watch?v=aJVs-3FE9xc

[24] Տե՛ս «Գեննադի Պետրոսյան. ճակատագրական վերադարձ Մադաթաշեն»: Հեղինակ՝ Տրդատ Մուշեղյան: https://hetq.am/hy/article/138057?fbclid=IwAR2spXntlBO9uGffeCPMeMakl7tfdR8mKZouIzm7Gn1Iux5SRki4PwLIr_Y#.YZoDnyE1Ops.facebook

պատերազմի, Ղարաբաղյան հակամարտության նոր փուլի լուսաբանումը ոչ միայն կարևոր է լրագրողական հետաքննությունների և զուտ տեղեկատվության տեսանկյունից, այլև իբրև փաստական նյութ կարող է օգտակար լինել շատ ավելի լայն շրջանակների, այդ թվում՝ իրավական ոլորտի ուսումնասիրողների համար։

НАИРА АМБАРЦУМЯН – *Некоторые особенности освещения преступлений во время войны в контексте Карабахского конфликта.* – Для профессионального и целевого освещения военных преступлений, преступлений против человечества, совершенных сторонами во время войн, вооруженных конфликтов и т.д. необходимы не только профессиональные журналистские знания и навыки, но и узкоспециальная конкретная подготовка, в том числе – высокая степень информированности об исторических основах конфликта, его политических поэтапных развитиях, о деятельности международных организаций, знание различных отраслей международного права, сведения о возможностях работы журналистов в международных судах и порядке аккредитации, о стиле и способах работы в международном суде во время рассмотрения военных преступлений и т.д.

Вышеупомянутые знания могут помочь сопоставить факты, начать расследование, выявлять новое, информировать общество о более важном, видимом невооруженным глазом, и, что самое главное, могут стать вехой в понимании сути конфликта и формировании новых взглядов и новых восприятий относительно геополитических процессов, развивающихся вокруг него. В статье исследована тема Карабахского конфликта, в частности 44-дневной войны.

Ключевые слова: *Карабахский конфликт, военные преступления, права человека, международное уголовное право, освещение вооруженных конфликтов, военная журналистика*

NAIRA HAMBARDZUMYAN – *Some Features of the Coverage of Crimes during the War in the Context of the Karabakh Conflict.* – For professional and targeted reporting of war crimes of the parties during wars, armed conflicts, crimes against humanity, etc., not only professional knowledge and skills in the field of journalism but also certain levels of professional training are required, including a high level of awareness of the historical background of the conflict, political events, the activities of the international organizations, the sphere of jurisdiction, knowledge of various branches of international law, knowledge of the possibilities of journalistic work in the international courts, accreditation procedures, work style, forms, etc.

The mentioned above knowledge can help in terms of comparison of facts, initiate investigations, identify issues, inform the public about what is observable to all, and, the most important, this basis can become a guide in shaping new views and perceptions of the conflict and its geopolitical processes. The article deals with the research topic in the context of the Karabakh conflict, in particular, the 44-day war.

Key words: *Karabakh conflict, war crimes, human rights, international criminal law, coverage of armed conflicts, military journalism*